— Ես չեմ մեղադրում աւազակներին, որոնք կողոպտել են ձեզ, նրանք հաւատարիմ են մնում իրանց արհեստին, — ասում է Կարօն վրդովուելով: — Ես մեղադրում եմ ձեզ, որ դուք չգիտէք պահպանել ձեր կայքը: Շատ ուղիղ է ասում քուրդը, թէ «հայրը մի կոյր հաւի սիրտ չունի»...

— Տղերք, — դառնում է նա դէպի իր ընկերները, — գնանք մենք եւ ցոյց տանք քրդերին, թէ ամէն հայ այնպէս չէ, որպէս նրանք կարծում են:

Կարօն յայտնում է իր ընկերներին, թէ աւազակները մինչեւ իրանց տեղը հասնելը, անպատճառ պէտք է անցնէին այնինչ կիրճը. թէ նրանք ոչխարների յամրաշարժ ընթացքով հազիւ թէ մինչեւ կէսօր կը հասնէին այնտեղ, ուրեմն ժամանակ դեռ շատ կար: Իրանք կարող էին մի ուրիշ, աւելի կարճ ճանապարհով, կէսօրից կէս ժամ առաջ հասնել յիշեալ կիրճի մօտ եւ փակել անցքը. այդ կը լինէր միեւնոյնը, որպէս փակել որսը որոգայթի մէջ:

Եւ իրաւ, Կարօյի տարած ճանապարհը լինում է աւելի կտրուկ, թէեւ նա անցնում էր ամենավտանգաւոր սարաւանդների եւ դժոարին քարժայռերի միջով: Այն ճանապարհով անհնար է ձիաւոր մարդուն անցնել, ուր մնաց աւազակներին իրանց աւարով, այդ պատճառով նրանք զանց էին արել մօտաւոր ուղին:

Ճիշտ Կարօյի նշանակած ժամին տղերքը հասնում են յիշեալ կիրճի մօտ. նա լինում է մի նեղ փապար, որի միջով հազիւ կարող էր անց կենալ մի ձիաւոր: Փապարի մի կողմում բարձրանում էր ապառաժեայ ահագին պատ, միւս կողմում ընկած էր խորին անդունդ, մի սխալ քայլ բաւական էր գլորուելու ճանապարհորդին դէպի այն վիհը: Աւազակները թոով աւելի քան յիսուն ձիաւոր, հասնում են այնտեղ: Կարօն իր խումբը բաժանում է երկու մասի, ինքը Ասլանի հետ կտրում են կիրճի մուտքը, իսկ ծերունի որսորդը Սագօյի հետ բռնում են նրա ելքը: Կարօն պատուիրում է իր ընկերներին սպանութիւն չգործել, միայն երկիւղ տալ աւազակներին, որ նրանք թողնեն աւարը: Որովհետեւ սպանութիւնը կարող էր ենթարկել խեղճ գիւղացիներին աւազակների վրէժխնդրութեանը:

Եւ այսպէս էլ լինում է:

Կարօն իր դարանից ձայն է տալիս աւազակների գլխաւորին, որ թողնեն աւարը, եթէ ցանկանում էին կենդանի անցկենալ կիրճից: Նա պատասխանում է արհամարհանքով եւ հրամայում է քշել հոտերը:

Կարօն կրկին ձայն է տալիս՝ թէ նա դեռեւս խնայում է պարոն աւազակապետի գոռոզ գլխին եւ փորձում է իր գնդակի զօրութիւնը նրա գդակի